ส่ทุานไาน ทุานnmนmส่

Արաս Հրատարակչություն
Aras Yayıncılık
İstiklal Caddesi, Hıdivyal Palas 231/Kat 1
34430 Tünel, Beyoğlu-İstanbul
Tel: (0212) 243 06 02
info@arasyayincilik.com
www.arasyayincilik.com
Sertifika No: 44967

ARAS - ԱՐԱՍ 334

ՔԱՌԱՍՈՒՆ ՈՒԼՈՒՆՔ
Անահիտ Սարգիսեան

Հրատարակութեան պատրաստեց՝
Վահագն Քէշիշեան

Տպագրութիւն
Սենա Օֆսեթ

Մարտ 2026, Իսթանպուլ

ISBN 9786257460835

քառասուն ուլունք

անահիտ սարգիսեան

Տիկին Պէաթրիս

վիզը
երկա՜ր
ու բարակ

երկար բարակ վզին
ուլո՛ւնք ուլունք
մարգարիտէ մանեակ

Ա

բացաւ հանդերձարանը
ու դուրս հանեց
հագուստը իր
տօնական

հագաւ ու հասկցաւ
թէ անկարելի էր կրել
կճող հագուստը
մռմռացող ցաւերուն վրան

բացաւ հանդերձարանը
ու ետ կախեց
Տիկին Պէաթրիս
հագուստը իր
տօնական

Բ

երկա՛ր կանգնեցաւ
ելքի դրան առջեւ
որ չէ՛ր բացուեր
կղպուա՛ծ էր

ուշացումով հասկցաւ
Տիկին Պէաթրիս
թէ փրկութեան այն դուռը
կղպուած չէ՛ր

պարզապէս
ո՛չ դէպի դուրս
այլ դէպի ներս
կը բացուէր

գ

նստած
լռեռ ու տխուր
հանգուցեց տարիները
նոր եւ հին
ապա
հարիւր հարիւր
հանգոյցները բիւր
հատիկ հատիկ
սահեցնելով
փաթթեց կրկին
Տիկին Պէաթրիս
կծիկը յոյսին

Ղ

վարագոյրը քաշեց
պատուհանը ծածկեց
դուրսի մութը մռայլ
տեսնել չուզեց՝ մերժե՛ց
այսօրը բնա՛ւ
իր ասեղնագործած երազը չէ՛ր

վարագոյրը քաշեց
Տիկին Պէաթրիս
սրտին լոյսը միշտ վա՛ռ պահեց
ու նստաւ
թելիկ թելիկ
իր ձեռագործը շարունակեց

Ե

յաճախ կը ձեռագործէր
Տիկին Պէաթրիս
բարակ թելին ծայրը
յիշատակներուն հանգուցած
յուշիկ յուշիկ կ՚ասեղնագործէր

մերթ ընդ մերթ
դադար մը կ՚առնէր
լռուռ ու անշարժ կը ժպտէր
կարծես գլխուն վրայէն
հրեշտակ մը կ՚անցնէր

յաճախ կը ձեռագործէր
Տիկին Պէաթրիս
բարակ թելին ծայրը
յիշատակներուն հանգուցած
յուշերը կը ծաղկեցնէր

զ

յատուկ սէր ունէր
յախճապակիի՝
պտղաման
շաքարաման
գինիի բաժակ
ըմպակ ըմպանակ

սպիտակ լաթով կը սրբէր յաճախ
աչքին լոյսով կը փայլեցնէր
ցոլցլացող ցոլքերով կը պարուրուէր

յատուկ սէր ունէր
Տիկին Պէաթրիս
յախճապակիի
իւրաքանչիւրը
իր սրտին նման
բիւրեղ ու դիւրաբեկ